ԹԵՄԱ 3 ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

§ 38. ԵՎՐՈՊԱՅԻ ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ

1

Ավատատիրական աստիճանակարգում թագավորը համարվում էր ամենից բարձրը: Նա բարձրագույն դատավորն էր ավատատերերի վեճերում: Թագավորն անվանապես պետության բոլոր հողային տարածքների տերն էր՝ սենյորը: Խոշոր ավատատերերը՝ կոմսերը, դուքսերը, իրենց ավատը ստանում էին թագավորից և համարվում էին թագավորի վասալը, պարտավոր էին ստացած ավատի դիմաց կատարել ռազմական ծառայություն: Նրանց ավատն ամբողջական մարզեր էին: Թագավորի կոչով նրանք պարտավոր էին ներկայանալ՝ իրենց հետ բերելով խոշոր զինական ուժեր:

Աստիճանով ցածր ավատատեր էին մարկիզները և բարոնները: Իրենց ավատը նրանք ստանում էին կոմսից կամ դուքսից և համարվում էին նրա վասալը: Կոմսը կամ դուքսը նրանց համար սենյոր էր: Իրենց սենյորի կոչով նրանք պետք է ներկայանային զինվորական մեծ ջոկատով:

Ամենացածր աստիճանին կանգնած էին ***ասպետները***: Ասպետներն ավատ կարող էին ստանալ ինչպես թագավորից, այնպես էլ՝ կոմսից, դուքսից, մարկիզից կամ բարոնից, և դառնում էին նրա վասալը: Ասպետների գործը մշտապես պատերազմելու պատրաստ լինելն էր: Ասպետները վասալներ չունեին: Ասպետի ավատը 1–2 գյուղ էր, ինչը բավարար էր նրա զինվելու և կերակրվելու համար:

Խոշոր ավատատեր էր նաև քրիստոնեական եկեղեցին, որը տիրում էր ընդարձակ կալվածքների: Եկեղեցու տիրույթներից ավատ ստացած ասպետները համարվում էին եպիսկոպոսների և վանահայրերի վասալները: Նրանք պարտավոր էին պաշտպանել իրենց սենյորի տիրույթները:

Երբ ավատական կարգը դեռ նոր էր ձևավորվում, ավատատերերը թագավորական իշխանության ամուր հենարանն էին, բանակի հիմնական ուժը: Նրանք շահագրգռված էին նոր տիրույթներ ձեռք բերելով և ակտիվորեն մասնակցում էին թագավորի արշավանքներին ու պատերազմներին: Նման օժանդակության շնորհիվ էր, որ Կառլոս

Մեծին հաջողվեց նվաճել և մի կայսրության մեջ միավորել Եվրոպայի մեծ մասը:

Ավատատերերի օժանդակությունից զրկվելով՝ թագավորական իշխանությունը աստիճանաբար թուլանում էր: Երկրի ամբողջական մարզեր վերածվում էին դրանք կառավարող կոմսերի ու դուքսերի ավատի: Ժամանակի ընթացքում որոշ ավատատերեր ավելի ընդարձակ կալվածքների տիրացան, քան թագավորը: Նման ավատատերերը այլևս չէին ցանկանում ենթարկվել թագավորին, ում իշխանությունը գնալով դառնում էր ձևական: ***Պետությունը պրոհվում էր ինքնուրույն իշխանությունների:***

2

Թագավորական թույլ իշխանության պայմաններում ավատատերը շրջակա գյուղական բնակչության հովանավորն ու պաշտպանն էր: Թշնամու հարձակման դեպքում գյուղացիները պատսպարվում էին ավատատիրոջ ամրոցում: Ավատատերերը պաշտպանում էին իրենց գյուղացիներին, քանի որ վերջիններս մշակում էին նրանց հողերը, հարկեր վճարում և պարհակներ կատարում: Տոնական օրերին գյուղացիները հավաքվում էին դղյակի մոտ՝ ասպետական մրցախաղեր ու ներկայացումներ դիտելու:

Գյուղի բնակչությունը միավորված էր՝ կազմելով համայնք (կոլեկտիվ): Համայնքը ղեկավարում էր տանուտերը: Նրան ընտրում էին գյուղի բոլոր չափահաս բնակիչները: Համայնքին պատկանող արոտավայրերից և անտառներից հավասարապես օգտվում էին համայնքի անդամ բոլոր գյուղացիները: Գյուղական համայնքն ուներ իր դատարանը: Այդ դատարանում դատում էին մանր իրավախախտումներ կատարած գյուղացիներին: Սովորաբար դատն ավարտվում էր բարոյական պատիժներով կամ նյութական տուգանքներով: Ծանր հանցանքների դեպքում գյուղացիներին դատում էր ավատատերը: Գյուղացու համար ամենածանր պատիժը համայնքից հեռացվելն էր: Նման գյուղացին զրկվում էր համայնքի անդամի իրավունքներից, այսինքն՝ համայնքի պաշտպանությունից: Յուրաքանչյուր գյուղ ուներ

իր եկեղեցին կամ մատուռը: Համայնքի կյանքում եկեղեցին կարևոր դեր էր խաղում՝ որպես համայնքի կյանքը կարգավորող կենտրոն:

Ավատատիրոջ տիրույթները բաժանվում էին երկու մասի: Մեծ մասը զբաղեցնում էին գյուղական համայնքների հողատարածքները: Մյուս մասում ավատատերն անձնական տնտեսությունն էր վարում՝ ճորտերի ու կախյալ գյուղացիների աշխատանքով: Այդ տարածքում էր կառուցված ***ավատատիրոջ դղյակ-ամրոցը և եկեղեցին:***

Գյուղական համայնքը ավատատիրոջը հարկ էր վճարում բնամթերքով և աշխատանքով: Գյուղացիները հարկը վճարում էին իրենց հողամասից ստացվող բերքից և իրենց արտադրած տնայնա-գործական ապրանքներով: Հարկի այս տեսակը անվանում էին ***բահրա:*** Բահրա վճարելուց բացի՝ գյուղացիները պարտավոր էին կատարել ***կոռային աշխատանքներ՝*** տարվա ընթացքում որոշակի ժամանակ աշխատել տիրոջ անձնական կալվածքում: Բացի այդ՝ գյուղացիները պարտավոր էին մասնակցել ամրոցի, կամրջի և այլ շինարարական աշխատանքների:

3

Քաղաքներն առաջանում էին առևտրական ճանապարհների խաչմերուկներում, խոշոր վանքերի ու ամրոցների շուրջը, գետային և ծովային նավահանգիստների մոտակայքում: Միջերկրական ծովի ափերին առաջացան Ճենովա, Վենետիկ, Մարսել, Պալերմո քաղաքները: Եվրոպայի ցամաքային ուղիների խաչմերուկներում և նավարկելի գետերի ափին առաջացան Միլանը, Փարիզը, Լոնդոնը, Ֆյոլնը և այլ քաղաքներ:

Եվրոպայի ներկայիս քաղաքների մեծ մասն առաջացել է միջնադարում: XI դ. Գերմանիայում կար 170 քաղաք: Միջնադարյան քաղաքներում ապրում էր մոտ 3000 – 5000 մարդ: Շատ քիչ քաղաքներ ունեին 20000 և ավելի բնակչություն: Դրանց թվում էին Փարիզը և Ֆլորենցիան: Քաղաքների մեծ մասը պարսպապատ էր: Պարիսպներն ունեին աշտարակներ և դարպասներ, որոնք գիշերը փակվում էին: Ժամանակի ընթացքում քաղաքների բնակչությունն աստիճանաբար ավելանում էր, այդ պատճառով էլ կառուցվում էր պարիսպների երկրորդ, իսկ երբեմն էլ՝ երրորդ շարքը:

Միևնույն արհեստով զբաղվող վարպետները միավորվում էին հատուկ կազմակերպությունների մեջ, որոնք կոչվում էին ***համքարություններ***: Վարպետների ընդհանուր ժողովն ընդունում էր տվյալ համքարության կանոնադրությունը: Համքարության անդամ կարող էին լինել միայն վարպետները: Կանոնադրությունը սահմանում էր վարպետի պատրաստելիք ապրանքների տեսակը, քանակը և որակը:

Ամեն համքարություն ուներ իր դրոշը և զինանշանը, կառուցում էր իր եկեղեցին, սահմանում իր համար տոնական օրերը: Քաղաքին սպառնացող վտանգի դեպքում համքարության անդամները կազմում էին զինված ջոկատներ, կռվում էին քաղաքի վրա հարձակված թշնամու դեմ, կատարում պահակային ծառայություն:

Մեծ քաղաքներն առևտուր էին անում նաև հեռավոր մարզերի և այլ երկրների հետ: Արտաքին առևտրով զբաղվում էին հատուկ մարդիկ՝ ***վաճառականները:*** Նրանք ևս ստեղծում էին իրենց միավորումները: Դրանք կոչվում էին ***գիլդիաներ:*** Ամեն մի տեսակի ապրանքի առևտրով զբաղվող վաճառականները կազմում էին առանձին գիլդիա: Ժամանակի ընթացքում տարբեր քաղաքների վաճառականներ սկսեցին միավորվել մեկ գիլդիայի մեջ: Եվրոպայում հայտնի էր հյուսիս-գերմանական ծովային վաճառականների գիլդիան, որն անվանում էին ***Հանզա:***

Լրացուցիչ նյութ

Հատվածներ Փարիզի բրդագործ ջուլհակների համքարության կանոնադրությունից

Փարիզի յուրաքանչյուր բրդագործ ջուլհակ կարող է իր տանն ունենալ երկու լայն և մեկ նեղ դազգահ, իսկ տնից դուրս նա չի կարող ունենալ ոչ մեկը: Յուրաքանչյուր բրդագործ ջուլհակ իր տանը կարող է ունենալ մեկից ոչ ավելի աշակերտ՝ առնվազն չորս տարվա ծառայության պայմանով: Համքարության անդամներից ոչ

մեկը չպետք է աշխատանքը սկսի արևածագից առաջ: Հակառակ դեպքում ենթակա է տուգանքի: Ենթավարպետ ջուլհակները պետք է աշխատանքը թողնեն հենց որ հնչի երեկոյան աղոթքի կոչող զանգի առաջին հարվածը, բայց գործիքները պետք է դասավորվեն զանգի հնչյունից հետո: